ԱՐԵՒՄՈՒՏՔ

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՏԱԳՆԱՊ

Աչունը ապակիէ դեղին բոժոժներ էր շարժում։

Պատուհանիս երկայն վարագոյրի վրայ մի կտոր լոյս էր թառել. ներսը չեղակի շուքեր։ Դրսում մանեկող հարբած քամին կարծես ամէն ինչ շարժում էր։ Դուռը բացուում էր եւ աղմուկով գոցուում. ապակիէ լամբարը տատանուում էր. պատուհանը դողում էր։

Հին վենետիկեան տունները լեցուն են խորհրդաւոր ներկայութիւններով։ Իւրաքանչիւր սենեակ իր պատմութիւնն ունի. իւրաքանչիւր մի անկիւն սառած լռութիւնների հետ է խօսում։

Վերմակի տակ պառկել էի, դեղնած շրթունքներով եւ այրուող ճակատով՝ ես եւս հինաւուրց մի յիշատակ։ Դարերի մէջ ստեղծուած պատմութիւնների ծոցին միտքս փալ էր բաց անում, անհանգիստ ձեռքերով շարում էի խաղաթուղթերը, վիճակ էի դուրս հանում, պրպտում խաւարը եւ յետոյ՝ գլուխս ուժասպառ վայր էի նետում բարձի վրայ եւ աչքերս յառում ձեղունին, ուր միամիտ թռչուններ էին նկարուած։

Ամէն ոք գիտէ, որ այն տարին աչունը իջել էր պատուած թեւերով եւ խիստ բարկացած։ Հիւսիսային բեւեռից մինչեւ Գրոնլանդ՝ ցրտի այդ չտեմարանը՝ քամին սուրացել էր կատաղի, ամպի կտորներ բերանին մէջ սեղմած. պոյտ էր եկել Անգլիոյ վրայ, եղունգները քսել Լամանշի ջուրերին, յետոյ վեր էր բարձրացել, նետուել Բելգիայի ծխնելոյզների վրայ, աւելել դաշտեր, տանիքներ փչրել ու Ֆրանսայի վրայից ոռնալով, Ալպեան լեռների մօտ մեղմացած, եկել ընկել էր Լադունա։ Լիդիոյի մօտ մակոյկներ էին խորտակուել. ձկնորսների առագաստանաւերը՝ աքլորի գոյն՝ շուտափոյթ վերադարձել էին տուն։ Նաւամատոյց շոգենաւերը ուշացրել էին իրենց մեկնումը։

Հիմա անշուշտ մանէր գալիս Կալէների մէջ՝ մազերը վեր տնկած եւ թեւերը թափահարելով։ Սուրբ Մարկոսի վրայից թառամած տերեւների նման ոսկիներ էին թափած. Կաղօրը ծփում էր փուլ եկած ալիքի պէս. Մեծ Կանալը ջղայնացել էր եւ Աֆրարիի զանգակատան կատարին մի ամպ արիւնել էր իր կուրծքը։

Ամէն անգամ որ դուռը բացուում էր, սպասում էի որ մէկը ներս կը մտնի։

Ոչ ոք չէր գալիս։

Դուռը բոյնից վայր ընկած թռչունի ձայն էր հանում։ Պատերի վրայ գոյները մարուել էին։ Անկիւնում դրուած փայտէ մեծ սնտուկը ծանր էր եւ տխուր։ Մահճակալիս վրայ հաստ կտաւներ էին կախուած, անհետացած զարդերով։ Ձեղունը ցած էր եւ մգլոտութեան հոտ էր գալիս։

Փողոցից, ուր տները մէկը միւսին չիլ աչքով են նայում, երբեմն ձայներ էին բարձրացընում։ Անցնող աղջիկների հրհրոց, բանջարեղէն ծախողի մելամաղձոտ եւ արեւելեան կանչը, երեխաների աղմուկը։ Յետոյ, կարծես ամէն ինչ լռում էր. պատուհանը դնացք էր նստում ու դողդողում, դուռը չարունակում էր խփել։

Ականջներիս մէջ՝ ջերմի եւ քինէնի պատճառով բարակ մի սուլոց էր լսուում, ճակատիս վրայ ձեռքս բոց էր սեղմում, թեւերս ծանր էին եւ միտքս վառ։

Ոչ ոք չէր գալիս։

Հիւանդութեան կամ բարոյական մեծ տագնապի ժամանակ, հոգին իր միջից դուրս հանած վտանգը դնում է իր առջեւ եւ երկրօրէն դիտում։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան